

ՄԵՅՐ ԷԹՈՌՈՒՄ
ԷՍ ԹԵՄԵՐԱԲՍ

«ԱՂՈԹՔԸ ՇՈՒՆՉՆ Ե ԱՐԹՆԱՅԱԾ ՀՈԳՈՒ...»

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՂԱՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Մարդը, որ ի քնն բարու և չարի հավերժական պայքարով է հաստատում իրեն և, երազների հույլն ի մի քերած, ձգտում լավին, գեղեցկին, կատարյալին ու վսեմին, բոլոր ժամանակներում էլ ապրում է անձեռակերտ բարձունքների մվաճման հույսով, որը մահ հաճախ երազանք ենք անվանում: Եվ, ի վերջո, ելնեջումների մշտափոփոխ շղթայում ամեն ոք գտնում է իրենը, սեփականը, որ համբերության դժվարին զենով տալիս է քաղցր պտուղներ: Իսկ շահելու համար զոհողությունն է պետք:

Այսպես, այս վեճ գիտակցումով դեկտեմբերի 14-ին իրենք կյանքը, որպես կենդանի պատարագ, ազգի հարատևության մշտանորոգ սեղանին դրեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երեք երիտասարդ սարկավագները՝ Սամվել սրկ. Խաչատրյանը, Նշան սրկ. Հովհաննիսյանը և Տիգրան սրկ. Սանոսյանը: Իսկ մինչ այդ...

ԿՈՉՈՒՄՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ

«Որ գտանն զանձն իւր՝ կորուսեց զնա,
եւ որ կորոյս զանձն իւր վասն իմ՝ գտեց զնա»:
(ՄԱՏԹ. Ժ 99)

Ձեռնադրության մախրմբաց օրը՝ դեկտեմբերի 13-ը, ևս իր յուրօրինակ խորհուրդն ուներ: Հավարտ երեկոյան ժամերգության, կատարվեց ընծայալների քահանայության կոչումը՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ներկայությամբ և օրհույամբ: Հանդիսավոր արարողությանը ներկա էին Մայր Աթոռի հոգևորականները, սարկավագները, դպրաց դասը, Գևորգյան Հոգևոր Ընտրանի սաները, ինչպես նաև մեծաթիվ հավատացյալներ:

«Նայեաց ի մեզ եւ ողորմեաց մեզ Քրիստոս» շարականի երգեցողությամբ մորընձաները, ծնրադիր, Մայր Տաճարի դռնից, երեք հանգրվաններով, խորտավիլիակ Տ. Հակվազուն Ծ. վրդ. Նաջարյանի ուղեկցությամբ, առաջանում են դեպի իջման Սուրբ Սեղան, բոլորվում աթոռին բազմած ձեռնադրող Սրբազան Հոր՝ Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպս. Զինչիկյանի շուրջը:

Կատարվում է հավատի հրապարակային քննություն, որի ընթացքում ձեռնադրող սրբազանի բոլոր հարցերին դրականորեն է պատասխանում խորտավիլիակ հայր սուրբը՝ հավաստելով, որ ընծայալները «կամաւորութեամբ եկեալ են յայս կարգ եւ յօժար կամօք յանձն առնում զլուծ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Թողեալ են զամենայն հոգս զբաղմանց աշխարհիս, եւ ... ունին զուսումն քահանայութեան լիովին, եւ զգիտութիւն աստուածային օրինաց»:

Ձեռնադրող Սրբազանը շարունակում է հարցաքննությունը: Առաջադրված հերթական հարցերին ևս տրվում են հաստատական պատասխաններ: Նվիրյալները հանձն են առնում «ուխտել եւ զհետ երթալ ընթացիցն Քրիստոսի, յաղթատութիւն, ի քաղց, ի ծարաւ, ի վիշտս, ի հալածանս, ի մախատինս, ի չարչարանս

վասն Բրիստոսի, առանց ձանձրամայոյ յամենայն ժամ զգաստութեամբ կալ ի պաշտօնն Աստուծոյ, եւ ոչ փոխանակել զգործն Աստուծոյ ընդ մարմնաւոր գործոց, կատարել զամենայն հրամանս սրբոց առաքելոցն եւ հայրապետացն, եւ կալ ըստ կանոնաց նոցա, եւ ոչ լուծանել, կամ հակառակ կանոնաց ուսուցանել զոք ի վարս քրիստոնէութեան»:

Ապա կատարվում է դավանության քննություն: Նորընծաները մեկ առ մեկ, հրաժարվելով, նշանակում են բոլոր աղանդավորներին ու հերձվածողներին և խոստանում աշակերտել ու հետևել Հայ Առաքելական Եկեղեցու, ինչպես նաև Տիեզերական Եկեղեցու սրբերին: Ներկա հավատացյալները միաբերան ասում են. «Յաշխենական յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

Այնուհետև ձեռնադրող եպիսկոպոսը խաչակնքում է ընծայալների գլուխները և ասում. «Նոյն զեղումն շնորհաց Սուրբ Հոգւոյն ծաւալեսցի ի վերայ ձեր. քանայով զառագաստ մտաց ձեր ի ճանաչումն աստուածութեանն Բրիստոսի. ըստ որում ոչ ոք է որ ասէ Տէր զԹիսուս, եթէ ոչ Հոգւովն Սրբով: Եւ պայծառացուցէ զմիտս ձեր ի դառնութիւն ուղղափառ հաւատոյ ընդ սուրբ հայրապետսն»:

Ձեռնադրող սրբազանն իր խոսքի վերջում հրամայում է նվիրյալներին՝ քարձրածայն ասել Հայ Առաքելական Եկեղեցու հավատի ուղղափառ դավանությունը:

Քառահայության կոչման արարողությունն ավարտվում է «Պահպանիչ»-ով և «Տերունական աղոթք»-ի երգեցողությամբ:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕՄՈՒՄ

«Ա՛ն զլուծ Տեառն մերոյ Թիսուսի Բրիստոսի.
զի լուծ նորա քաղցր է, և բեռն նորա փոքրոգի»:
(ՁԵՌՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՇՏՏՈՑ)

14 դեկտեմբերի... Կրկին ցնծություն ու քերկրանք ապրեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, զի իր նվիրյալ երեք զավակներն ուխտեցին քայլել Երկնառաք Վարդապետի կենարար շավիղներով՝ Նրա պատվիրաններով առաքնորդելու հավատալիոր հոտը դեպի անմահություն, դեպի դուռն փրկության, որ է Երկնային Արքայությունը:

Մայր Տաճարում եպիսկոպոսական Ս. Պատարագ է: Օրվա պատարագիչն է ձեռնադրող սրբազանը՝ Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչիյանը: Սուրբ և անմահ Պատարագին ներկա են Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբաններ, հյուրեր, մեծաթիվ հավատացյալներ: Սուրբ Պատարագին զուգընթաց կատարվում է նաև ձեռնադրության խորհուրդը:

ԽՈՐՀՐԴԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ձեռնադրությունը Հայաստանյայց Եկեղեցու յոթ խորհուրդներից չորրորդն է, որ կոչվում է նաև խորհուրդ կարգի կամ Կարգ Քառահայության: Ձեռնադրությամբ Աստծուն ու Նրա Եկեղեցուն ծառայության կոչվածը առաքելական հաջորդականությամբ շնորհ, նվիրապետական իշխանություն և կարգ է ստանում՝ խորհրդակցելու ու շնորհ փոխանցելու, մարդկանց սեփական մեղքերի հասարկալի ու դրանցից արձակելու, ինչպես նաև Ավետարանը քարոզելու և ուսուցանելու:

Քրիստոս իր քարոզչության ընթացքում ըմտրեց և իրեն հաջորդ կարգեց աշակերտներին ու մույն իշխանությանը օժտեց նաև նրանց: Այդ մասին են հավաստում Մատթեոս (ԺԸ 18, ԻԸ 19-20) և Հովհաննես (Ի 22-23) առաքյալները: Պենտեկոստի օրը առաքյալները Սուրբ Հոգով լցվեցին՝ իրենց ստացած առաքելական իշխանությունն արհաբար կյանքի կոչելու համար: Նրանք ևս, իրենց կարգին, այդ իշխանությունը փոխանցեցին իրենց անմիջական հաջորդներին: Այսպես անընդմեջ, շարունակաբար դարեդի ընթացքում իրագործվեց այդ իշխանությունը քրիստոնեական եկեղեցում: Այն մույնն է նաև այսօր, միշտ և հավիտյան:

«Ի ՍԱՐԿԱԻԱԳՈՒԹԵՆԷ Ի ՔԱՀԱՆԱՅՈՒԹԻՒՆ»

Պատարագի «Ջի ողորմած եւ մարդասէր ես Աստուած» խոսքից հետո, սկսվում է ձեռնադրության հանդիսավոր արարողությունը: «Այսօր Աստուածութիւնն գումարեանայ» շարականի երգեցողությունից հետո, Սուրբգրային կանոնական ընթերցվածների, սաղմոսների և շարականների փոխասացությամբ, Գվիրյալները ձերադիր առաջանում են դեպի Ավագ Խորան և աստիճաններով վեր բարձրանում, որպեսզի կոչվեն «ի սարկաւագութենէ ի քահանայութիւն»:

«Աստուածային և երկնաւոր շնորհ» շարականի երգեցողությամբ, նորընծաները դառնում են դեպի ժողովուրդը և «ափ ի բաց» ձեռքերը վեր բարձրացնում՝ ի նշան աշխարհիկ կյանքից հրաժարման և ի Գվիրումն հոգևոր կյանքին:

Շարունակվում է շարականի երգեցողությունը: Գվիրյալները ծնկած շրջվում են դեպի ձեռնադրող սրբազանը: Սրբազան հայրը, ձեռնադրության Մաշտոցից ընթերցելով համապատասխան հատվածը և ձեռքերը խաչաձև դնելով նրանցից լուրաքանչյուրի գլխին, նրանց Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով սարկավագությունից կոչում է քահանայության՝ ասելով. «Ես դենմ զձեռս ի վերայ սոցա, և դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցին սոքա զաստիճան քահանայութեան անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ»: Ներկա հավատացյալները, հոգով ապրելով արարողության խորհուրդը, միաձայն ասում են. «Արժանի են»:

ձեռնադրության գլխավոր աղոթքով ձեռնադրող սրբազանն Ամենակարող Աստծուց խնդրում է, որ անշարժ պահի իր շուրջը բոլորված քահանայության կոչվող ընծայացուներին և թվարկում նրանց քարոզելու, բժշկելու, Ս. Պատարագ մատուցելու, խորհրդագործելու, քահանայագործելու պարտավորությունները, ինչպես նաև դրանք կատարելու համար ստացած շնորհներն ու իշխանությունը, որոնք տրվում են ձեռնադրությանը: Հավարտ աղոթքի, Ջավեն սրբազանը Գվիրյալների ուրաղը, որ մեր Տիրոջ լուծի խորհրդանիշն է, իսկ սարկավագն այն կիսով չափ է կրում ձախ ուսի վրա միայն, փոխարինում է փորտւարով (ուրարի ծայրից բռնելով՝ ձախ ուսից դեպի աջն է տանում և շուրջբոլոր զետեղում նրանց պարանոցներին)՝ ասելով. «Ա՛հ գլուծ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի լուծ մորա քաղցր է, եւ բեռն մորա փոքրոգի»: Այս կերպ երեք ընծայալները հանձն են առնում կրելու մեծ վարդապետի լուծը լիովին և կատարյալ գիտակցությամբ:

Ահա և Ս. Պատարագի ամենախորհրդավոր պահը: Վերաբերող հայր սուրբը՝ Տ. Բագրատ արեղա Գալստյանը, Սրբարանից բերում է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի կենդանի ու կենդանաբար մարմինն ու արյունը խորհրդանշող հացն ու զինից պարունակող սկիհը: Պատարագիչը սկիհով օրհնում է հավատացյալ ժողովուրդին:

Ապա սրբազան հայրը, տյառնագրելով նորընծաներին, ասում է. «Օրհնություն Աստուծոյ Հօր և Որդւոյ և Հօգայն Սրբոյ՝ իջէ ի վերայ ձեր, որ կատարեցաք ի կարգ քահանայութեան, ընծայել զառաջադրութիւն մարմնոյ և արեանն հրիստոսի վասն խաղաղութեան աշխարհի և թողութեան մեղաց»:

Այնուհետև Սրբազանը ներկայներին է դիմում օրվա խորհրդին պատշաճող գեղեցիկ քարոզով և շնորհավորանքի խոսքով՝ բարձր գնահատելով նրանց ինքնընծայումը՝ ի մասնավորի նշելով.

«Օրինակ լինիչի հատատացելոց քանիք, գնացիք, սիրով, հաւատովք, սրբութեամբ, ... միտ դիր ընթերցուածոց, մխիթարութեան, վարդապետութեան: Մի՛ անփոյթ առնէր զշնորհացոյ, որ ի քեզ են» (օրինակ եղեք հավատացյալներուն ձեր կյանքով, վարք ու բարքով, ընթացքով, անասանելի, ստուգութեան վրա հիմնված հավատքով, սիրով և անբասիր կյանքով: Ժրաջան եղեք Սուրբ Գրոց ընթերցանութեան մեջ և այն շնորհքները, քանքարները, որ ի վերուստ տրված են ձեզ Ավետարանի շահաստանին մեջ, քազմապատկեցեք): Այսպես կ'ըսե Պողոս Առաքյալ իր Տիմոթեոս աշակերտին գրած Ա թուղթի Դ գլուխի 12-14 համարներին մեջ:

Սիրելի հավատացյալներ, անկասկած այսօր ուրախութեան օր մըն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար, բայց հոգևոր ուրախութեան օր մըն է մահ մահաւանդ Ամենայն Հայոց Վեհափառ և շնորհազարդ Կաթողիկոսին համար, որուն ձեռնաստուգներեն երեքը, կոչումի գիտակցութեամբ, այսօր, Սուրբ այս եկեղեցւոյ Սուրբ խորանին վրա իրենց անձերը ընծայեցուցին, որպէսզի քահանայական աստիճանին հասնին և ժողովուրդին ընդմեջեն ծառայեն Բարձրալն Աստուծո:

Միտ դիր ընթերցվածոց: Ընթերցվածներուն ժրաջանութեամբ հետևե: Ոչ թե չենք կարողար, շատ քան կկարդանք: Բայց մեր կարդացածներուն մեկ կարևոր մասը պիտանագու չէ մեզի: Եվ ոչ պիտանագու քան գիտնալը տգիտութեան մեկ ձևն է, ինչպես տգիտութեան ուրիշ մեկ տեսակն է պետք եղածը չգիտնալը: Մեր եկեղեցւոյ Հայրերը իրենց ամբողջ կյանքը մկիրած էին Սուրբ Գրոց ընթերցանութեան, վասն զի այնտեղ ի հայտ կուգա աստվածային ճշմարտութիւնը, աստվածային հայտնութիւնը մախ ստվերային կերպով, հետո երբ կմարմնանա և կմարդանա Աստուծո Որդին և մարդոց փրկութեան ճանապարհը կբանա այն աստիճան, որ երբեմն անգիր գիտեին Ավետարանները և կգրադեին մեկնաբանութեամբ: Աստվածաշունչը 72 գիրքերեն կբաղկանա, որոնցմէ 24-ը Նոր կտակարանն է, և այս գիրքերը կպարունակեն աստվածային ճշմարտութիւնը, աստվածային հայտնութիւնը և մեզ կուսուցանեն հավիտեանական կյանքի ժառանգորդ լինելը: Աշխարհի վրա որ գիտութիւնը, որ փիլիսոփայութիւնը, որ գաղափարաբանութիւնը, որ հմարքը, որ գլուտը կըցած են մինչև հիմա Աստուծո ճանապարհը, աստվածային ճշմարտութիւնները, Աստուծո կամքը և հավիտեանական կյանքին ճանապարհը ուսուցանել մարդկութեանը: Այս քոյրերն ենք, անշուշտ Սուրբ Հոգին հասանե ի թիկունս մեր: Նա՛ կուսուցանե, նա՛ կմխիթարե մեզ, որովհետև երկնավոր Հայրը ինք ստեղծած է համագոյքը, ինք ստեղծած է տիեզերքը, որովհետև Նա՛ ասաց և եղեն, հրամայեաց և հաստատեցան: Բո են երկինք և երկիր, աշխարհ լրիվ Դու հաստատեցեր և այս պատճառով ալ զի սույն իսկ վաստակիմք և նախատինս հաճմն առնումք, զի հուսացեալ ենք Աստուծո կենդանի, որ է Փրկիչ ամենայն մարդկան: Եվ եթե կպատահի, որ մեր ուսման ընթացքին դժվարութիւններու հանդիպինք, որովհետև գիտնալը, սորվիլը իմանալով է, մեր աղոթքները կբարձրացնենք Երկնավոր մեր Հոր և կըսենք, ինչպես մեր Եկեղեցւոյ հայրերը ըսած են, «Ծագեա Տէր գլոյս գիտութեան քո ի սրտի իմում, բաց զայս սրտի իմոյ, զի ընկալայց զաւետիս փրկութեան»: Այսօր

այս երեք ընծայալները հառաքացան Խորանին վրա և ընդունեցին ձեռնադրության Սուրբ Խորհուրդը: Եթե ինձի հարցնեք, թե ի՞նչ է խորհուրդը, ամսիչապես պատասխանելու կո՞ծվարանամ, բայց խորհուրդը երևցող, նյութեղեններում հետևեն, աղոթքներու միջամտությամբ ամերևութապես աստվածային շնորհքներում հեղումն է շնորհընկալին վրա: Եկեղեցին յոթ խորհուրդներ ունի՝ Մկրտություն, Դրոշմ, Ապաշխարություն, Հաղորդություն կամ Սուրբ Պատարագ, Պսակ, Ձեռնադրություն և վերջին Օծում: Այսօր այս երեք ընծայալները ձեռնադրության խորհուրդը ընդունեցին: Մենք՝ հոգևորականներս, ինչպես որ մկրտության ատեն ջուրը և Մյուռոնը կհայթայթենք և աղոթքներու միջամտությամբ, ամոնեանելիորեն երախային վրա աստվածային շնորհը կիջնա և շնորհազարդ կդառնա, ինչպես Պատարագի ատեն մենք հացը և գինին կհայթայթենք և աղոթքներու միջամտությամբ հացը և գինին կփոխակերպվին և կդառնան Բրիստոսի մարմինը և արյունը, այնպես և ձեռնադրությամբ, աղոթքներու միջամտությամբ աստվածային շնորհը կիջեն նորոգ ձեռնադրյալներում վրա, որպեսզի անոնք ըլլան շնորհազարդ, օծումի գիտակցությամբ ամբողջ իրենց կյանքին ընթացքին իրենց պաշտոնը փառավորեն, Հայաստանյայց Եկեղեցվո պայծառության համար աշխատին: Հին ատեն մեր ժողովուրդի ազնվական դասը իր արյան պարտքը կատարելեն ետքը, այսինքն՝ իր անդրանիկ զավակը Հայրենիքին ընծայելեն ետքը, իր երկրորդ զավակը կմփրաբերեր, կընծայաբերեր Եկեղեցվո: Հիմակ, նոր ժամանակներում մեք, հայ հոգևորականը ինք պետք է որ մտքի և հոգիի ազնվականություն ցույց տա: Իրենց հավատքը այնպես ամուր պետք է ըլլա, ինչպես Հայոց աշխարհի լեռներն են, իրենց մփրոմը այնքան անսակարկ սիրով ըլլա, այնքան գեղեցիկ, որքան Հայոց աշխարհն է:

Սիրելի հավատացյալներ, եղբայրներ և քույրեր.

Այսօր, ինչպես երեկ երեկո, այս ընծայալները ուխտ ըրին և ըսին, որ իրենց պիտի ըլլան քաջ հովիվ, որոնք կճանչնան իրենցինները և կճանչցվին իրենցիններեն: Այս երիտասարդները ուխտ ըրին: Մենք սովորություն ունինք ձեռնադրություններ կատարելու Այլակերպության տոնին, որովհետև Այլակերպության խորհուրդին հետ հին մարդը կդադրի, հին մարդը իրենց վրազեն կհամվի և նոր մարդ կզգենում: Այսօր իրենք դարձան նոր մարդ, ստացան Սուրբ Հոգվույն շնորհները: Քրիստոս Այլակերպության լեռան վրայեն տեսավ Գողգոթան, տեսավ նաև Սուրբ Հարությունը: Մեր նոր արեղաները պետք է գիտնան, թե հայ հոգևորականին կյանքին մեք միայն դժվարություններ չկան, այլ կան նաև մխիթարության և սփոփանքի հիմանալի պահեր, երբ իրենց ներշնչումը կառնեն անպալման հնազանդությամբ, սրբակյաց ողջախոհությամբ, հնազանդության, ողջախոհության և պարտականության կատարման սփոփանքը կունենան:

Հին Ուխտի պատմության մեք հաճախ հանդիպած ենք աստվածաշնչական դեմքերու, որոնք Աստուծո ներկայութենեն կփախին, փախած են: Բայց կան նաև մարգարեներ, որոնք կրսն՝ «խոսեաց Տէր, զի լուիցէ ծառայ ք»: Այդ փախողներն են կամ փախողներեն են մեր նախաձնողքը՝ Կայեն, Զաքարիա, օրենսդիր աստվածատես մեծ մարգարեն Մովսես, Նոր Կտակարանեն Պետրոս Առաքյալ, որ թեթևեցավ իր հավատքով, Հուդա, որ մատնեց իր վարդապետը, Պողոս, որ Դամասկոսի ճամփեն ետ վերադարձավ: Բայց Առաքյալները, երբ Հիսուս հարցուց իրենց՝ կարե՞ք ըմպել զբաժակն, զոր ես ըմպելոց եմ.

պատասխանեցին՝ կարենք: Այս երիտասարդ ընծայալները խոստացան և ըսին, թե իրենք ամբողջ իրենց կյանքին մեջ սիրով, հեզությամբ, խոնարհությամբ, ժողովուրդին ծառայության ընդմեջեն, Աստուծո ծառայության կնվիրվին, ժողովուրդի, Հայրենիքի, Եկեղեցվո սերը, Աստուծո հանդեպ տածված սերեն ետքը, առաջնահերթն է, որմով պիտի դեկավարվին և կարենամ ըսել՝ ես եմ հովիվն քաղ և ճանաչեմ զիսմն և ճանաչիմ իմոցն: Եվ մենք այսօր, ի բոլոր սրտե ջնորհավորելով զիրենք, կըսենք՝ Աստված, տվիչ ամենայն բարեաց, թող զիրենք իրենց կարգին մեջ հաստատ պահեն, ընեն մշակք առանց ամոթո: Այսօր ձեռքերնին մածին վրա դրին և այլևս ետ պիտի չդառնան:

Անգամ մը մեկը եկավ Հիսուսին հարցնելու համար՝ ի՞նչ պետք է ընես, որ երկնքի արքայությունը ժառանգես, որովհետև այս աշխարհին վրա համբաված օրեր են մեր կյանքերը՝ 50, 60, 80, 90, քիչ մը ավելի, քիչ մը պակաս, բայց անդին կա հավիտենական կյանք մը: Ի՞նչ պետք է ընենք, զայն ժառանգելու համար: Եվ Հիսուս ըսավ՝ զիտեք օրենքը ինչ կըսեն. սիրեցեք ձեր տեր Աստվածը ձեր բոլոր սրտով, ձեր ամբողջ էությանը: Ուրիշ անգամ մը երիտասարդ մը եկավ և ըսավ՝ Տեր, ետևեղ գալ կուզեմ, բայց երթամ հայրս թաղեմ գամ: Չարտոնեց Հիսուս, որովհետև հայրը թաղել կնշանակեն աշխարհիկ բաներով զբաղիլ, այսինքն՝ իր եղբայրներուն հետ ժառանգությունը բաժնել և վեճերու մեջ իյնալ և այլն: Եթե Աստուծո գործին պիտի նվիրվես ըսավ, աշխարհը պիտի մոռնաս և պիտի գաս իմ ետևես: Այս նորոգումները կթողուն աշխարհը և աշխարհի հոգերը և կուզան ծառայելու Եկեղեցիին, ժողովուրդին և Աստուծո փառքը տարածելուն: Ձեռքերնին մածին վրա դրած՝ ետ պիտի չնային Ղովտին կնոջը նմանելու համար: Հապա հառաջափայց պիտի ընթանամ ուղիղ ճանապարհին: Այս առիթով, հանուն Ամենայն Հայոց Վեհափառ և շնորհազարդ Վաթողիկոսին, կշնորհավորենք զիրենք և իրենց ծնողները, ազգականներն ու բարեկամները և կըսենք՝ եղե՛ք մշակք առանց ամոթո և միշտ օրինակ եղեք հավատացյալներուն ձեր ընթացքով, ձեր քարոզխոսությամբ: Ձեր քարոզխոսությունը թող խոսոր չհամեմատի ձեր կյանքին հետ, անսակարկ սիրով, հավատքով և սրբությամբ: Ուշադիր եղեք Սուրբ Գրոց ընթերցվածներուն և անփույթ մի լլլաք այն բոլոր շնորհներուն, որոնք Աստված ձեզի տված է, որպեսզի երեկ, այսօր, վաղը և միշտ կարենանք ամենքս ալ փառավորել զանուն Ամենասուրբ Երրորդությանն, որ է օրհնյալ հավիտյանս հավիտենից ամենն:

Մինչ սարկավագները երգում են «*Ողջոյն տուր միմեանց ի համբոյր սրբութեան*», Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և մյուս հոգևորականները Սուրբ Խորան են բարձրանում և շնորհավորում նորոգմաներին՝ համբուրելով նրանց նորած և մյուռոնաբույր ձեռքերն ու ճակատները:

Սուրբ Պատարագն ավարտվում է «*Հայրապետական մաղթերգ*»-ով: Նորած քահանաներին հերթով մոտենում է Մայր Տաճարում ներկա հավատավոր ողջ ժողովուրդը և մեկ առ մեկ համբուրում նրանց մյուռոնած ձեռքերը այն վեհ ակնկալությամբ, թե Տիրոջ կամոք, նրանցից յուրաքանչյուրը լինելու է արժանի ու իսկական հովիվ, յուր անձն է դնելու՝ հանուն իր հոտի փրկության և նեղ դժոժով առաջնորդելու է նրան դեպի հավիտենություն:

ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՂԱՅԻ ԿԱՄ ՎԵՂԱՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Նույն օրը, հավարտ երեկոյան ժամերգության, մասնավոր օրհնությանը, կատարվում է «Օրհնություն արեղայի» կարգը կամ վեղարի տվչությունը, որը կուսակրոնության խորհրդանշն է: Այս կերպ մորընծաները միանում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությանը՝ կատարելով իրենց սրբազան ուխտը:

Ավագ Սուրբ Խորանի վրա, աթոռին քազմած սրբազանի շուրջն են ծնրադրում երեք մորած քահանաները՝ Տ. Աբշակը, Տ. Խորենը և Տ. Արշենը: Սաղմոսասացություններ և Սուրբգրային ըմբարցվածներից հետո, երգվում է «Որ գերազանցեալ գտար առաւել» կանոնական շարականը: Ծարումակվում են ավետարանական ըմբերցվածներն ու աղոթասացությունը: Ապա սրբազան հայրը «առ Հայրն Աստուած» ուղղված աղոթքով խնդրում է. «Ընորհեա՛ ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Բրիստոսի ծառայիս քո ... արեղայի՛ որ ուրանայ զգանկութիւն աշխարհի՛ արժանի լինել ողորմութեան քում: Որպես զի մորոգեսցի հոգւով եւ մարմնով, եւ զհին մարդն մերկասցի խորհրդով իւրով եւ գործովք, եւ զգեցցի զմոր մարդն որ ի քէն է հաստատեալ արդարութեամբ եւ սրբութեամբ եւ ճշտութեամբ, շնորհօք Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Բրիստոսի»:

Այնուհետև սրբազան հայրը հանում է մորածների զխից գրակը (չբրոնը) և փոխարենը դնում վեղարը՝ ասելով. «Աստուած զգեցուցանէ ձեզ զմոր մարդն՝ որ ըստ Աստուծոյ հաստատեալ է արդարութեամբ եւ սրբութեամբ եւ ճշմարտութեամբ, եւ եղիցիք դուք հպատակ եւ հնազանդ եկեղեցւոյ, կանխեալ ի սերն Աստուծոյ հոգւով ի տուն եւ ի գիշերի»:

Տվչության արարողությունն ավարտվում է «Պահպանիչ»-ով: Իսկ մորած երեք արեղաները՝ հայր Արշակը, հայր Խորենը և հայր Արշենը ուղղվում են դեպի Վեհարան՝ ստանալու Վեհափառ Հոր հայրական օրհնությունը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄՈՏ

Մեծավ ուրախությամբ է Վեհարանի աշխատասենյակում ընդունում իր մորած զավակներից Նորին Սուրբ Օծությունը: Տերումական աղոթքից և «Պահպանիչ»-ից հետո, սրտի խոսք է ասում ձեռնադրող սրբազան հայրը՝ առանձնակի ճշելով.

«Երեկ և այսօր մասնավոր ուրախության պահեր ապրեցավ Մայր Աթոռը: Եկեղեցին իբրև մայր բերկրեցավ, որովհետև ըսված է «Մայր Որդւով բերկրեալ» (Սաղմ. ԾԺԲ 9): Եվ այս պարագային, իբրև Հայաստանայց Եկեղեցւոյ առաջին սպասավոր և Ամենայն Հայոց Կաթողիկոս և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վանահայր, դուք ման իբրև հայր բերկրեցաք, որովհետև Մայր Աթոռի միաբանության թիվը համալրվեցավ երեք մոր զինվորագրյալ անդամներով: Բազմաթիվ աղոթքներ կարդացինք մեր Եկեղեցւո երանյալ հայրապետներու հոգեգորած աղոթքներեն, որոնք Սուրբ Հոգիին մերշնչւմով հիանալի խոսքեր էին, որոնց հետևեն, ամշուշտ, մորընծաները շնորհ ստացան: Չենք գիտեր, ապագան ցոյց պիտի տա, թե ամոնք ինչ մեծագործություններ պիտի ընեն, ինչպիսի հիանալի գիրքեր պիտի հրատարակեն և Մայր Աթոռի պարծանքը պիտի ըլլան: Ինչպես 19-րդ դարուն վերջը փառանգ մը կար հոգևորականներու, որոնք ճշմարտորեն ինքզինքնին Հայաստանայց Եկեղեցւո մեք հիանալի գործեր

ընելով, հափշտակիչ միջև հիմա, որոնցմով մենք կապրո՞ծեմանք: Տա Աստված, որ Ձեր իսկ կենդանության օրոք տեսնիք իրենց մեծնալը, ծաղկիլը, աճիլը, զգտակար ըլլալը: Եվ տա Աստված, Տփիչ ամենայն բարյաց, որպեսզի մոր հովիվներ հարուցվին, Հայաստանյայց Եկեղեցին ամրանա, թե հոգևոր վերաթափության, վերազարթոնքի ինչպես այստեղ, այնպես ալ մերքին թեմերում մեջ՝ կենտրոնական Ասիոյ և ի ծագս աշխարհի, Մաշո Աթոռը կարենա մոր առաքելական գործ կատարելու համար կոչումի գիտակցությամբ և իրենց պաշտոնը փառավորող հոգևորականներու փառանգներ պատրաստել Ձեր հսկողությամբ, Ձեր ուսուցչությամբ: Նալին և Ձեզ պես ըլլան՝ արդյունաշատ, զգտակար և ազգը կարենա պարծենալ իրենցմով:

Աստված Ձեզի երկար կյանք տա Վեհափառ Տեր, որպեսզի տեսնեք Ձեր միաբանության հիանալի գործերը»:

Այնուհետև օրհնելով մորաօծ արեղաներին՝ Ամենայն Հայոց Հայրապետը մրանց է փոխանցում նաև իր հայրական հորդորները.

« Կուգե՛մ շատ կարճ մի երկու խոսք ըսել: Առաջին. Պահեր կան, արարքներ կան, որոնք այնքան խոսում են իրենք իրենց մեջ և իրենց մեջեն, որ հավելյալ խոսքի կարիքը շատ չկա, ամենք իմաստը բացատրելու կամ հասկնալու համար: Այս ինքնամփիրտը Աստուծո սեղանին մեր ժողովրդի սպասավորության և Մաշո Աթոռ Սուրբ Էջմիածնին ինքնին մեծ խոսք է, ինքնին ձեր հավատքին մարմնացումին արտահայտությունն է: Ապրե՛ք:

Երկրորդ. Այս ընդունարանին մեջ, այս աշխատասենյակին մեջ ամեն տեսակի դժվար պահերի մեջեն կանցնի՞ք երբեմն: Մեծ այցելուներ կընդունի՞ք, պատասխանատու անձեր կուգան, կարևոր հարցերի շուրջ կխոսակցի՞ք, երբեմն վարչական, առտնին գործերու տաղտուկին մեջ կըլլանք: Ամեն մեկ պահը այս գրասենյակին ունի տեսակ մը իր եռանդը՝ լավ, ուրախացուցիչ, երբեմն՝ տրտմեցուցիչ, երբեմն ճեղացուցիչ: Մարդկային կյանքը այս երկու թելերով է հյուսված: Այս պահը եզակի պահերից մեկն է, որ այս գրասենյակս ավելի լուսայից պահ մը կապրի ձեր երիտասարդ այս ինքնընծայումին ի տես, և այս պահը այլևս չի միանիր այն պահին, երբ դուք կզայիք այստեղ զանազան գործերով: Այս տեղը այլևս ձեզմով հարստացած կզգա ինքզինքն: Եվ գիտեք սակայն, որ համեստ ըլլալը, խոնարհ ըլլալը, ընդառաջող ըլլալը քրիստոնեական մեր հավատքի ամենաբարձր հատկանիշներից մեկն է, որ «խոնարհեցուցանէ զանձն իւր, բարձրացի և որ բարցրացուցանէ զանձն, զանձն իւր խոնարհեսցի»: Այս է հոգևորականության ամենն կարևոր հատկանիշներեն մեկը: Կմաղթեմ, որ այդ միաբանին կարգապահ և խոնարհ, հնազանդության հոգին ունեցող հոգևորականներ ըլլաք և իմ կյանքին ճշմարտություններից, ապրած ճշմարտություններից մեկը այն է, որ Եկեղեցիները ուժեղ կըլլան աշխարհիս մեջ և ուժեղ են այսօր, որոնք այսպես մկրտապետական կարգի մկրտականությունը գիտեն հարգել և անհատեն ավելի, ընդհանրական շահերը կզերադասեն: Ապրե՛ք: Աստված ձեզ օրհնե և զորացնե՛ք:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, մրանց բաշխելով իր հայրական օրհնությունը, ըստ Տիրոջ պատգամի, պատվիրում է լինել այն սղը, որով մշտապես համեմելու են հայ հավատավորի կյանքը դեպի հարձրյալը տանող ճշմարիտ հավատով, ման ցանկանում մրանց մշտապես տեսնել Հայ

Առաքելական Սուրբ Եկեղեցու նվիրյալ ու արժանավոր սպասավորների շարքում որպես Աստծու և ժողովրդի հավատարիմ ու մշտադրոյում ծառաներ կամ, ինչպես ասվում է Զեռնադրության Մաշտոցում, «*Մշակք առանց ամօթոյ*»...

Եվ երեք մորթնծաները, որ ուխտել էին իրենց ճանապարհը լուսավորել Տիրոջ լույսով, հոգիներում անթեղելով Ամենայն Հայոց Հայրապետի խրատ-հորդորները, մեկ անգամ ևս համոզվեցին, թե հոգու լույսը դեպի հնազանդություն է առաջնորդում: Իսկ դեպի հնազանդություն անվարան քայլելու համար պետք է զորանալ աղոթքով, զի, մեծանուն գրող Ռուբենո Հեյի բառերով իսկ ասած, «*Աղոթքը շունչն է արթնացած հոգու*»:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ